# Տ Ա Ր Ե Կ Ա Ն Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի
2004թ. գիտահետազոտական և գիտակազմակերպչական գործունեության
հիմնական արդյունքների մասին

1. Հաշվետու տարին կենտրոնի գործունեության համար արգասաբեր էր: Ձեռք բերվեցին իմ քանի կարևոր արդյունքներ: Գումարվեց հերթական, թվով VI հանրապետական գիտական նստաշրջանը՝ նվիրված Շիրակի պատմամշակութային ժառանգության հիմնախնդիրներին: Նստաշրջանը, նպատակ ուներ հայտածել Շիրակի ազգագրության, բանահյուսության հնագիտության, ճարտարապետության, բարբառագիտական և էթնոսոցիոլոգիական հետազոտությունների ներկայիս մակարդակը և դրվածքը հանրապետությունում: Եռօրյա աշխատանքներին մասնակցեցին հանրապետության և դրսի (Ռուսաստան, Հունաստան, Վրաստան) 60-ից ավելի հայագետներ: Գիտաժողովի նյութերը հրատարակվեցին առանձին ժողովածուով (7 հրատ. մամուլ):

Կենտրոնի կարևոր ձեռքբերումներից է նաև «Գիտական աշխատություններ» ժողովածուի VI հատորի հրատարակությունը՝ 16 հրատ. մամուլ ծավալով:

2. Հաշվետու տարում կենտրոնում պետբյուջեից ֆինանսավորվել են 5 գիտական թեմաներ: Սրանց կատարման ուղղությամբ 2004թ. ձեռք են բերվել հետևյալ արդյունքները.

- «Անիի նյութական մշակույթը (ըստ նորահայտ արվարձանի հնագիտական տվյալների) թեմայի կատարող խումբը (ղեկ.՝ ավագ գիտաշխատող, պ.գ.թ. Լ. Եգանյան) հաշվետու տարում Հայկաձորի քարանձավային բնակավայրում շարունակել է հնագիտական պեղումները: Նպատակ ունենալով բնակավայրի առնվազն մեկ համալիրի հնարավորինս ամբողջական պատկերն ունենալը՝ աշխատանքները ծավալվել են նախորդ տարում պեղված թիվ 1 քարանձավի առաջին հարկում և կից երկու քարանձավներում: Պեղումների արդյունքում պարզվել են կառուցողական և ֆունկցիոնալ նշանակություն ունեցող մի շարք խնդիրներ: Թիվ 4 քարանձավի առաջին հարկում բացված գոմի պեղումներով պարզվել են միջնադարյան համալիրի տնտեսական և բնակելի հատվածների կառուցման, իրար հետ հաղորդակցման, ծածկի և ճարտարապետական լուծման այլ հարցեր: Հնագիտական նյութերը հիմնականում IX-XIII դդ. խեցեղեն է՝ առօրյա օգտագործման ամաններ: Գտածոների մեջ կան նաև

աշխատանքային գործիքներ: Գտնված քաղաքային դրամը (XIV դ.) շատ կարևոր դրամագիտական գյուտ է, որը նաև թույլ է տալիս հստակ թվագրել հուշարձանի տվյալ շերտը: Խումբը հաշվետու տարում հրատարակել է 2 գիտական հոդված և 2 զեկուցման հիմնադրույթներով մասնակցել է ՇՊՄԺ հանրապետական VI գիտաժողովին: Պատրաստ է հրատարակության խմբի ղեկավար Լ. Եգանյանի մենագրությունը՝ նվիրված Շիրակի անտիկ դամբարանային պեղումներին:

- «Ախուրյանի ավազանի ցեղերն ու ցեղային երկրները ուրարտական և երվանդունյան դարաշրջաններում» թեմայի կատարող խումբը (ղեկ.՝ ավագ գիտաշխատող, պ. գ. դ. Ս. Պետրոսյան) ավարտում է և մինչև տարեվերջ հրատարակության կպատրաստի վերոհիշյալ թեմայով աշխատանքը՝ 16 մամուլ ծավալով: Այս հետազոտությունը թույլ է տալիս որոշակիություն մտցնելու նշված ժամանակաշրջանում Ախուրյանի ավազանի առանձին ցեղերի էթնիկական պատկանելիության հարցում, ուրվագծել ցեղային երկրների զբաղեցրած տարածքների տեղադրությունը, նաև պարզել այդ ցեղերի առասպելաբանական պատկերացումների և պաշտանմունքների առանձնահատկությունը՝ սկսած ավելի վաղ ժամանակներից եկող տոտեմիստական հավատալիքներից: Ելնելով հնդեվրոպաբան Ժ. Դյումեզիլի «Եռաֆունկցիոնալ» տեսությունից՝ կատարող խումբը բացահայտել է դրա դրսևորման առանձնահատկությունները վերոհիշյալ տարածքում, ճշտվել և գիտական շրջանառումբյան մեջ են դրվել սեպագիր աղբյուրների հիշատակած մի շարք տեղանունների և ցեղանունների նորովի ստուգաբանությունները: Թեմայի գծով կատարող խումբը հաշվետու տարում ունեցել է 5 գիտական հաղորդումներ և տպագրել է 4 հոդվածներ («Բազմավեպ», «Պատմա-բանասիրական» հանդեսներ, կենտրոնի «Գիտական աշխատություններ» և այլն):
- «Տնտեսական զբաղմունքները և տնտեսության յուրացնող ձևերը Շիրակում XXI-XXդդ.» գիտական թեմայի կատարող խումբը (ղեկ. ավագ գիտաշխատող պ. գ. թ. Կ. Բազեյան), ավարտել է ուսումնասիրությունը և հրատարակության է պատրաստում «Շիրակի բնակչության տնտեսական զբաղմունքները» աշխատությունը: Թեմայի գծով պաշտպանվել է մեկ թեկնածուական ատենախոսություն, թեմայի շրջանակներում նաև կատարվում են գենդերային հետազոտություններ նվիրված կանանց տնտեսական գործունեության, նրանց սոցիալական դերի և արդի հանրության մեջ նրա գործառույթների խնդիրներին, կանացի արհեստների ուսումնասիրությանը: Պատրաստ է նաև մեկ թեկնածուական

տենախոսություն՝ «Հայոց երկաթագործական արհեստները XIX-XXդդ.» թեմայով: Թեմայի ուղղությամբ 2004թ. եղել են 4 գիտական հաղորդումներ և տպագրվել են 3 հոդվածներ: Ամբողջությամբ պատրաստ է տպագրության խմբի կազմած «Շիրակի տնտեսական կենցաղի բացատրական բառարան»-ը (5.5 հրատ. մամուլ):

- «Շիրակի արդի բանահյուսության ուսումնասիրումը ազգահոգեբանական հայեցակարգով» թեմայի կատարող խումբը (ղեկ. հ. գ. թ. Կ. Սահակյան) ավարտում է հիմնարար հետազոտությունը և պատրաստում է հրատարակման «Շիրակի երգային և բանաձևային բանահյուսություն» աշխատանքը, որը ներկայացնում է մարզի բանահյուսական, ազգահոգեբանական ընդհանուր պատկերը՝ բանասացների կենսագրական տվյալներով, ծանոթագրություններով, հարուստ բառարանով, ցանկերով, ներդիրներով և դիտարկում է Շիրակի տարածաշրջանում կենցաղավարող ծիսական արարողությունների նշանակությունն ու բնույթը, առավել կենսունակ բանահյուսական ժանրերի (վիպական, քնարական, առածային, հմայական, ծիսական և այլն) առանձնահատկությունները աղետից հետո: Խմբի կողմից մշակվել են էքստրեմալ վիճակներում աղետյալ ազգաբնակչության հոգեկարգավորման գործընթացի մեխանիզմները: Հաշվետու տարում կատարող խումբը հրատարակել է 3 գիտական հոդվածներ և 2 հաղորդումներ:
- «Շիրակի արդի ժողովրդական երգարվեստի ժանրային, տաղաչափական և երաժշտախոսքային առանձնահատկությունները» (ղեկ. բ. գ.թ. Ս. Հայրապետյան) թեմայի գծով անցկացվել են երկու բանահավաքչական արշավներ (Լեռնակերտ,Նոր Կյանք,Պեմզաշեն գյուղեր): Ավարտվել է ժողովրդական երաժշտության մոտ 50 նմուշների ձայնագրումը, քարտագրումը և նոտագրումը: Կատարվել է երգասացների անձնագրավորում, մշակվել և ամբողջացվել է Գյումրու նվագարանագործ վարպետների անվանացանկը, ինդպես նաև վերջնական տեսքի է բերվել Շիրակի ժող. երաժշտության հրատարակված նմուշների և ձայնագրված բնագրերի հաահավաք մատենագիտությունը: Թեմայի շրջանակներում տարվող աշխատանքները ավարտման փուլում են, և կարճ ժամանակից հետո կարելի է ամբողջական աշխատանքը ներկայացնել տպագրության: 2004թ. թեմայի գծով կատարող խումբը  հրատարակել է 2 հոդված և 2 հիմնադրույթներ:

3. –

4. -

5. 2004թ.հունվարից փոխվեց կենտրոնի իրավաբանական կարգավիճակը, և ՀՀ կառավարության 23.11.2003. N 1811 որոշմամբ՝ նախկինում Հնագիտության և ազգագրության ինստիտուտի մասնաճյուղ հանդիսացող կենտրոնը 2004թ. հունվար 1-ից վերակազմակերպվեց «ԳԱԱ ՇՀՀ կենտրոն» պետական ոչ առևտրային ինքնուրույն կազմակերպության:

6. –

7. –

Աղյուսակ 1-

Աղյուսակ 2 *2004թ. Կենտրոնի թեմատիկայի ամփոփ տվյալներ*

| Հիմնարկությունը | Պատբյուջեից ֆինանսավորվող թեմաների թիվը | | Այլ աղբյուրներից ֆինանսավորվող թեմաների թիվը | | |
|---|---|---|---|---|---|
| | կատարվել է | ավարտվել է | գրանտներ | տնտ. պայմա-նագրեր | այլ աղբյուրներ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Շիրակի հայագի-տական հետազոտություն-ների կենտրոն | 5 | 5 | - | - | - |

Աղյուսակ 3. –

Աղյուսակ 4. *Կենտրոնում անցկացված հանրապետական և միջազգային կոնֆերանսները, սիմպոզիումները և այլ գիտական միջոցառումներ*

| Հ. Հ. | Միջոցառումներ | անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները | Մասնակիցների թիվը | |
|---|---|---|---|---|
| | | | ընդամենը | այդ թվում՝ արտ.երկրներից |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական VI գիտաժողով | 29-31 հոկտեմբերի, Գյումրի | 60 | 5 |

Աղյուսակ 5 *ԳԱԱ աշխատակիցների արտասահման, այդ թվում ԱՊՀ -անդամ երկրներ, կատարած գործուղումները*

| | Հիմնարկությունը | Երկիրը | Գործուղված գիտնականների թվաքանակը | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Գիտաժողովներին մասնակցելու համար | Համատեղ գիտական աշխատանքն կատարելու համար | Բանակցությունների և կոնսուլտացիաների համար |
| 1 | 2 | 3 | 4 | | 5 |
| 1 | ՇՀՀ կենտրոն | Վրաստան,<br>Բուլղարիա,<br>Ռուսաստան | 2<br>1<br>3 | | |

Աղյուսակ 6. –

Աղյուսակ 7. *Արտասահմանյան գիտնականների ընդունելություն ԳԱԱ հիմնարկություններում*

| | Հիմնարկությունը | Երկիրը | Ընդունված գիտնականների թվաքանակը | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Գիտաժողովներին մասնակցելու համար | Համատեղ գիտական աշխատանք կատարելու համար | Բանակցությունների և կոնսուլտացիաների համար |
| 1 | 2 | 3 | 4 | | 5 |
| 1 | ՇՀՀ կենտրոն | Հունաստան<br>ՌԴ<br>Վրաստան | 2<br>2<br>3 | | |

Աղյուսակ 8. *ԳԱԱ գիտաշխատողների 2004 թ. հրապարակումների ընդհանուր քանակը*

| | Հիմնարկությունը | Մենագրություն, ժողովածու և այլն | | Ուսումնական ձեռնարկ, դասագիրք և այլն | | Հոդվածներ, զեկուցումներ թեզիսներ և այլն | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հանրա-պետ. | Արտա-սահմ. | Հանրա-պետ. | Արտա-սահմ. | Հանրա-պետ. | Արտա-սահմ. |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1 | ՇՀՀ կետրոն | 4 | - | 1 | - | 47 | 7 |

Աղյուսակ 9. *Ասպիրանտների թվաքանակը*

| Հիմնարկությունը | Ասպիրանտների քանակը (այդ թվում կանայք) առ 1.01.2005 թ. | | Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում կանայք) | |
|---|---|---|---|---|
| | ա/կ. | ա/չկ. | ա/կ. | ա/չկ. |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| ՇՀՀ կենտրոն | - | 5/2 | - | - |

Աղյուսակ 10. *ԳԱԱ աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներ*

| N | Հիմնարկությունը | Աշխատողների ընդհանուր թիվը/այդ թվում կանայք/ | Գիտական աշխատողների ընդհանուր թիվը/այդ թվում կանայք/ | ԳԱԱ ակադե-միկոսներ /այդ թվում կանայք/ | Գիտության դոկտորներ /այդ թվում կանայք/ | Գիտության թեկնածուներ /այդ թվում կանայք/ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | ՇՀՀ կենտրոն | 19/12 | 16/8 | - | 1/0 | 5/3 |

Աղյուսակ 11. –

Կենտրոնի տնօրեն՝ Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ